ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

09 դեկտեմբերի 2022 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 (ութ) անդամներ:

Բացակա էին Վլադիմիր Վարդևանյանը, Ավագ Սահակյանը, Արշալույս Վարդանյանը, Աշխեն Մարուքյանը, Արմեն Սարգսյանը, Լիանա Գևորգյանն ու Վալենտինա Կաղիյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են ութը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի առաջին նստաշրջանի արտահերթ թիվ 4 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 79-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 71-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու

մասին» N 79-Ա որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 72-Ա/

Մինչև օրակարգի 2-րդ հարցը ներկայացնելը՝ համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը նիստին ներկա ավագանու անդամներին ներկայացրեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի և համայնքի ավագանու Կանոնակարգի 120-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջը՝ համայնքի ավագանու անդամը պարտավոր է չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին:

Քանի որ օրակարգի 2-րդ հարցը համայնքի ավագանու անդամ Դանիել Դանիելյանին Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակելու մասին է, ուստի վերջինս չի մասնակցի որոշման նախագծի քվեարկությանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Դանիել Ավագի Դանիելյանին նշանակել Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-1

Որոշումը չընդունվեց, քանի որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի

ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ **ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ**:

Մինչև օրակարգի 3-րդ հարցը ներկայացնելը՝ համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը նիստին ներկա ավագանու անդամներին ներկայացրեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի և համայնքի ավագանու Կանոնակարգի 120-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջը՝ համայնքի ավագանու անդամը պարտավոր է չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին:

Քանի որ օրակարգի 2-րդ հարցը համայնքի ավագանու անդամ Վարդան Սուքիասյանի հորը՝ Մուշեղ Հմայակի Սուքիասյանին Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին է, ուստի Վարդան Սուքիասյանը չի մասնակցի որոշման նախագծի քվեարկությանը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1 Մուշեղ Հմայակի Սուքիասյանին նշանակել Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-1

Որոշումը չընդունվեց, քանի որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ **ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ**:

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Համայնքի ղեկավար Հ. Բալասյանը հայտարարեց, որ համայնքի ավագանու անդամ Վարդան Սուքիասյանը 2022թ. դեկտեմբերի 09-ին իրեն գրավոր տեղեկացրել է «Արդար Հայաստան» խմբակցությունից դուրս գալու մասին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ